ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՀՄԱ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

25.04.2019թ.

Ժամը 16^{30}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԾ առաջատար մասնագետ Ռ. Զաթոյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սահակյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սահակյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար շինարարական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«Արտ Պլաս» ՍՊԸ
2	«Էյչ Գրուպ» ԱՊԸ
3	«Հիդրո Գրուպ» ՍՊԸ
4	«Սաֆարդայ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը՝ այդ թվում տեխնիկական բնութագրերը, գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՀՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Սահակյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքին և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակ	Ընդհանուր (նախահաշվային) գին՝ ՀՀ դրամ	Մասնակցի անվանումը	Գին (առանց ԱԱՀ)՝ ՀՀ դրամ	ԱԱՀ՝ ՀՀ դրամ	Գին (ԱԱՀ-ով)՝ ՀՀ դրամ	1-ին տեղ զբաղեցրած մասնակից
1	գանազան շինարարական քարեր Քար ուղիղ կտրվածքի	խմ	335.3	3,198,762	«Սաֆարդայ» ՍՊԸ	3,198,762	-	3,198,762	«Սաֆարդայ» ՍՊԸ
2	ցեմենտ (Տեմենտ)	կգ	697100	42,523,100	«Արտ Պլաս» ՍՊԸ	37,500,000	7,500,000	45,000,000	
					«Էյչ Գրուպ» ՍՊԸ	29,975,300	5,995,060	35,970,360	
					«Հիդրո գրուպ» ՍՊԸ	27,884,000	5,576,800	33,460,800	«Հիդրո գրուպ» ՍՊԸ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.6 և 7.7 կետերի պահանջները, և քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար հայտ էր ներկայացրել միայն մեկ մասնակից («Սաֆարդայ» ՍՊԸ-ն)՝ **26.04.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց **կասեցնել** նիստը և **30.04.2019թ.-ին** ժամը 14^{00}-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) գների նվազեցման նպատակով կազմակերպել միաժամանակյա բանակցություններ, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի (www.armeps.am) միջոցով դրա մասին ծանուցեց նշված մասնակցին: Նշված օրը և ժամին մասնակիցը չներկայացավ բանակցություններին և նրա ներկայացրած գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Սահակյան)

4.1 Հայտերի բացման նիստի ավարտի օրը՝ **30.04.2019թ.**-ին, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **«Սաֆարդայ» ՍՊԸ-ին**, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ **«Հիդրո գրուպ» ՍՊԸ-ին**: Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն (այսուհետ՝ կոմիտե) առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-10/1» ծածկագրով ՀՄԱ ընթացակարգի հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան կոմիտեի ներկայացրած՝ հարցման մասին տեղեկատվությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվա հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 11^{00}-ն, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՔՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ռ. Զաթոյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան